ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 22 » 01 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 007 - 24

Ձեռնարկողը՝ «ԼԵՅՄԱՆՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
Արարատ, Վերին Արտաշատ, Պռոշյան փ., տ. 3

Գործունեությունը՝ **Ջրաբերի լիթոիդային պեմզաների (պեռլիտների) հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ

<22> հունիսի 2024թ.

Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների (պեռլիտների) հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	**«ԼԵՅՄԱՆՍ ՄԱՅՆԻՆԳ»** ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Ակունք համայնք, բն. Կապուտան

Ներածական մաս. Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների (պեռլիտների) հանքավայրում «ԼԵՅՄԱՆՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում/ընդլայնում: Հանքավայրը նախկինում շահագործվել է «Կապուտանցի Դավիթ» ՍՊԸ-ի կողմից (համաձայն N29/056 Ընդերքօգտագործման թույլտվության), ներկայում այն շահագործվում է:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ընդունված՝ 2014 թվականի հունիսի 21-ին) 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ վերը նշված նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների (պեռլիտների) հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում՝ Ակունք համայնքի Կապուտան բնակավայրի վարչական սահմաններում: Հողամասերի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական և արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության են: Ընկերության կողմից արդյունահանման համար հայցվող տարածքը մոտակա՝ Ջրաբեր գյուղի բնակելի տարածքներց գտնվում է 150 մ հարավ-արևելք, զբաղեցնում է 10.7 հա մակերես: Արդյունահանման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն (արտադրական հրապարակ, լցակույտեր, ճանապարհներ) առկա են: Արդյունահանման ընդլայնման աշխատանքների համար օգտագործվելու է գոյություն ունեցող ճանապարհը՝ բարեկարգելով այն: Հանքավայրի տարածքում բացակայում են գրունտային ջրերի հորիզոնները: Հայցվող տեղամասում կամ հարակից տարածքներում բացակայում են մակերևութային ջրային ռեսուրսները:

Մակաբացման ապարները (որոնց հզորությունը տատանվում է 0.3-0.4մ միջինը՝ 0.35մ) ներկայացված են տարածքը կազմող ժամանակակից բերվածքներով՝

ապարների բեկորների հետ խառնված: Երբեմն լիթոիդային պեմզաները (պեռլիտները) դուրս են գալիս երկրի մակերևույթ:

Համաձայն ընդերքօգտագործողի կողմից ներկայացված տարեկան հաշվետվությունների արդյունքների՝ հայցվող տարածքում 01.01.2023 թվականի դրությամբ բլոկների պաշարների մնացորդը կազմում է.

Բլոկ 1-A – 387.853 հազար խոր.մ (մարվել է շուրջ 344.441 հազար խոր.մ պաշար),

Բլոկ 1-B – (1-A բլոկի տակ կախված) – 336.147 հազար խոր.մ,

Բլոկ 2-B – 1147.190 հազար խոր.մ,

Բլոկ 2-C_1 – (2-B բլոկի տակ կախված) – 573.595 հազար խոր.մ,

Բլոկ 5-C_1 – 183.924 հազար խոր.մ,

$A + B + C_1 = 2628709.0$մ^3

Ընկերության կողմից Ջրաբերի լիթոիդային պեմզաների հանքավայրի հայցվող տեղամասում նախատեսվում է ընդհանուր՝ 2216001.7մ^3 լիթոիդային պեմզաների արդյունահանում (կամ 2628709.0մ^3 մարվող պաշար): Նախագծված բացահանքում մակաբացման ապարների ընդհանուր ծավալը կազմում է 37770.0մ^3, նախագծային կորուստները հաշվարկված են 412707.3մ^3 կամ 15.7%: Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ լիթոիդային պեմզայի մարվող զանգվածի կկազմի 131435.5մ^3, ըստ լիթոիդային պեմզայի արդյունահանվող զանգվածի՝ 110800.0մ^3: Բացահանքի շահագործման ժամկետն ընդունված է 20 տարի: Արդյունահանված ավազը նախատեսվում է տեղափոխել ՋՏ կայանք, կամ հանքավայրի տարածքից ավազի տեղափոխումը կարող է կատարվել նաև սպառողների տրանսպորտային միջոցներով:

Հայցվող տեղամասի անկյունային կետերի կոորդինատները (10.7 հա հայցվող տեղամասում)ARM WGS 84 համակարգով հետևյալն են.

N	X	Y	N	X	Y
1	8470350	4468168	7	8470768	4467935
2	8470585	4468183	8	8470889	4467768
3	8470615	4468141	9	8470754	4467668
4	8470609	4468136	10	8470615	4467832
5	8470628	4468112	11	8470436	4468057
6	8470643	4468104	1	8470350	4468168

Նախագծով նախատեսվում է օգտակար հանածոյի արդյունահանումն իրականացնել էքսկավատորային հանույթով՝ առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման: Բացահանքի մշակման համար ընդունվում է ընդլայնական միակողմանի խորացմամբ մշակման համակարգը՝ մակաբացման ապարների արտաքին և ներքին լցակույտաառաջացմամբ: Մշակումը նախատեսված է վերևից-ներքև՝ 8մ բարձրությամբ աստիճանով: Ջրաբերի լիթոիդային ավազների հանքավայրը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- առավելագույն երկարությունը - 570.0մ,
- առավելագույն լայնությունը - 190.0մ,
- միջին խորությունը /հանված զանգվածի բարձրությամբ/ - 24.12 մ,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

• բացահանքի համար օտարվող մակերեսը - 10.7 հա:

Բացահանքը հարավ-արևմտյան մասում փաստացի բացված է: Սակայն հետագա շահագործման աշխատանքները ճիշտ կազմակերպման նպատակով պետք է իրականացվի 1772մ նիշ ունեցող հորիզոնի բացում՝ ինչպես հանքավայրի հյուսիս-արևելյան մասից, այնպես էլ նրա հարավ-արևմտյան մասից: Հյուսիս-արևելյան մասից բացումն իրականացվում է արևելյան եզրագծով անցնող գրունտային ճանապարհից մինչև 1772մ նիշ ունեցող հորիզոն գրունտային ճանապարհի կարգաբերմամբ /L=200մ, b=8-10մ/ ինչը կապ է հաստատում ՋՏ կայանքի հետ: Հանույթային աշխատանքներին զուգահեռ բացահանքի հարավ-արևմտյան մասի 1772մ նիշ ունեցող հորիզոնից նախատեսվող բացումը ը կհեշտացնի կապն արտաքին լցակույտի հետ:

Արդյունահանման աշխատանքները կատարվում են անմիջական զանգվածից էքսկավատորով օգտակար հանածոյի շերեփմամբ և տրանսպորտային միջոցների բարձմամբ, քանի որ ապարները նախնական փխրեցում չեն պահանջում: Օգտակար հանածոյի հանույթը կատարվում է 8.0մ լայնությամբ էքսկավատորային զուգահեռ անցումով: Միաժամանակ շահագործվում է մեկ աստիճան: Հանույթային աշխատանքները կատարվում են 8մ բարձրությամբ աստիճաններով որոնք մարվում են 55^0 թեքությամբ, երկու մարվող աստիճանների միջև թողնվում են 3մ լայնությամբ բերմաներ: Նշված պարամետրերով կառուցված բացահանքում ընդգրկված մակաբացման ապարների ծավալը հաշվարկված է մակաբացման $0.02մ^3/մ^3$ միջին գործակցով:

Հանույթային աշխատանքներն իրականացվելու են HYUNDAI R210LC-7 և ЭО-511Б մակնիշի էքսկավատորներով, որով լիթոիդային պեմզան բարձվելու է БелАЗ-540 մակնիշի ավտոինքնաթափների մեջ և տեղափոխվելու է 1.3կմ հեռավորության վրա գտնվող СМД 109 մակնիշի /թվով 3/ ջարդիչ-տեսակավորող կայանք՝ խճի և ավազի արտադրության համար (նշված բոլոր մեքենասարքավորումներն առկա են ընկերությունում):

Մակաբացման ապարներինծավալը բացահանքի վերջնական եզրագծի սահմաններում կազմում է $37770մ^3$, որոնք ներկայացված են՝ ժամանակակից բերվածքային ապարներով - $27070մ^3$, բուսահողով - $10700մ^3$: Հողաբուսական շերտի ապարները նախատեսված է տեղադրել բերվածքային շերտի ապարներից առանձին: Պեմզայի հետ խառնված բերվածքային շերտը բուլդոզերի օգնությամբ առանց նախնական փխրեցման կուտակվում են հանքաստիճանի հատակին, այնուհետև էասկավատորի միջոցով բարձվում են ավտոինքնաթափ և տեղափոխվում ՋՏ կայանք՝ վերամշակման: Պահանջարկի բացակայության դեպքում, երբ Ընկերությունը չի իրականացնի ընդերքօգտագործման թափոնների վերամշակում, մակաբացման ապարները (թափոնները) նախատեսվում են տեղադրել բացահանքի արևմտյան մասում ձևավորվող արտաքին ժամանակավոր լցակույտում: Լցակույտ կունենա հետևյալ պարամետրերը. երկարություն՝ 128մ, լայնություն՝ 28մ, առավելագույն բարձրություն՝ 8մ, շեպի թեքման անկյուն՝ 31^0, արտաքին լցակույտի մակերեսը մակերևույթում՝ 0.35 հա, հատկացվող մակերես՝ 0.5 հա: Բացահանքի 1740մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց իրականացվում է ներքին լցակույտաառաջացում: Ներքին լցակույտ են տեղափոխվում նաև արտաքին լցակույտի ապարները:

Ռեկուլտիվացիոն վերջնական աշխատանքները կկատարվեն արդյունահանման աշխատանքների ավարտին: Ռեկուլտիվացիոն աշխատանքների շրջանակներում, մակաբացման ապարները կփռվեն բացահանքի հատակում և կհարթեցվեն:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է բացահանքի արտադրական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշենստեցման նպատակով աշխատանքային հրապարակները, ավտոճանապարհները և լցակույտի մակերևույթը ջրցանելու նպատակով:

Խմելու ջուրը՝ 99.32մ^3/տարի, 0.382մ^3 միջին օրեկան ծախսով կիրականացվի ջրամատակարարման խողովակով (համայնքի հետ կնքված պայմանագրի հիման վրա), իսկ տեխնիկական նպատակով ջուրը՝ 2970մ^3 ծախսով բացահանքի համար կապահովվի 130(ԿՕ-002) մակնիշի ջրցան-լվացող մեքենայով՝ Ջրաբեր բնակավայրի ջրամատակարարման ցանցից՝ կնքվելիք ջրօգտագործման պայմանագրերին համաձայն: Կենցաղային կեղտաջրերը պարբերաբար կհեռացվեն բետոնային լցարան, որտեղից սահմանված կարգով պարբերաբար կհեռացվեն: Ջրհեռացման միջոցառումներ բացահանքում չեն նախատեսվում, քանի որ բացահանքի հատակի ապարներն ունեն ջրաթափանցելիություն:

Արդյունահանման աշխատանքներ ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է բացահանքում պեռլիտների արդյունահանման, տեղափոխման, *լցակույտերի առաջացման* և ջարդիչի աշխատանքով /ջարդիչ և փոխակրիչ/, որի արդյունքում առաջանում են անօրգանական փոշի և դիզելային վառելիքի այրման արգասիքները: ՇՄԱԳ-ում ներկայացվել է Բացահանքի, լցակույտի և ջարդիչ կայանքի համար աղտոտող նյութերի արտանետումների աղբյուրների բնութագրերը և հաշվարկվել է արտանետումների քանակները՝ հանքաքարի առավելագույն 169500 տ/տարի արտադրողականության դեպքում: Ջարդիչ կայանքում առաջացող փոշու ընդհանուր տարեկան արտանետումները կկազմեն 1.792 տ/տարի կամ 0.244 գ/վրկ: Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել է մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման և սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկներ՝ «Էռա» համակարգչային ծրագրով: Հաշվարկներում հաշվի է առվել ֆոնային աղտոտվածությունը: Համաձայն հաշվարկների արդյունքների՝ սպասվող գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում: Ստորև ներկայացված են հաշվարկների ամփոփ արդյունքները.

Աղտոտող նյութը	***Գետնամերձ կոնցենտրացիաները***	
	ՍԹԿ մասով	մգ/մ^3
Անօրգանական փոշի (SiO_2 20 – 70 %)	0.1845	0.055344
Ազոտի երկօքսիդ	0.0404	0.00808
Ածխաջրածիններ սահմանային	0.004946	0.004946
Ածխածնի օքսիդ	0.08	0.4
Մուր	0.00267	0.0004
Ծծմբային անհիդրիդ	0.04	0.02
$NO_2 + SO_2$	0.05	-

Ջրաբերի պեռլիտների հանքավայրի և ջարդիչ կայանքի շահագործման արդյունքում մթնոլորտային օդին հասցված տնտեսական վնասը հաշվարկվել է 116893.0 դրամ:

Հողային ռեսուրսների վրա ազդեցությունը պայմանավորված է հանքարդյունահանման աշխատանքներով և լցակույտառաջացմամբ: Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ կատարելիս ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան հողաբուսական շերտի ապարները նախատեսված է հանել և պահեստավորել բերվածքային շերտի ապարներից առանձին՝ լայնակույտերով: Ողողումը և հողմնատարումը կանխելու համար լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվելու են խատացանքով՝ օգտագործելով տարածքի բուսականության սերմերը: Լայնակույտերի լանջերի առավելագույն թեքությունը կկազմի 37^0, առավելագույն բարձրությունը՝ 3մ, իսկ լցակույտի զբաղեցրած մակերեսը՝ 0.37հա:

Արդյունահանման աշխատանքների ընթացքում, բացահանքում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի շահագործման ընթացքում առաջանում է աղմուկ: Աղմուկի հիմանական աղբյուր կհանդիսանա ՋՏ կայանը, ինչն ամենամոտ բնակելի շինությունից գտնվում է 1050 մետր հեռավորության վրա: ՇՄԱԳ-ում կատարվել են աղմուկի մակարդակի հաշվարկներ կատարվել են վատագույն սցենարով /բացահանքի և ՋՏԿ-ի համար/, հաշվի առնելով աղմուկը խլացնող պատնեշի բացակայությունը: Հաշվարկներով ստացված արդյունքների համաձայն՝ ամենամոտ բնակելի շինության շրջակայքում աղմուկի մակարդակը չի գերազանցել ՀՀ գործող նորմերին:

Հանքավայրի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, ավտոճանապարհ) պարբերաբար ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում ձայնախլացուցիչ սարքավորումներով՝ աղմուկի մակադակի նվազեցման նպատակով,
- տեխնիկա-տրանսորտային միջոցների երթևեկության բացառում ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա զտիչների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում որպես մետաղական թափոն,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

Ռեկուլտիվացիոն վերջնական աշխատանքները կկատարվեն արդյունահանման աշխատանքների ավարտին: Ռեկուլտիվացիայի ենթակա՝ 12 հա տարածքի ռեկուլտվացիոն աշխատանքների ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է 12886438.8 ՀՀ դրամ, որի մեջ մտնում են՝ լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի իրականացման աշխատավարձերի, օգտագործվող նյութերի, տրանսպորտի և մեղմացման միջոցառումների համար նախատեսված ծախսատեսկները:

Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը և սոցիալական միջավայրը /ներառյալ՝ աղմուկ, թրթռում/: Մշտադիտարկումների իրականացման համար տարեկան ծախսը կազմում է 1200.0 հազ. ՀՀ դրամ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են միջոցառումներ՝ ուղղված կենսաբազմազանության պահպանությանը կամ հնարավոր ազդեցությունների մեղմացմանը կամ կանխարգելմանը:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են միջոցառումներ՝ ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

ՇՄԱԳ-ում նախատեսվել եմ նաև միջոցառումներ ուղղված կենսաբազմազանության և հողային ռեսուրսների պահպանությանը: Համաձայն կենսաբազմազանության վերաբերյալ ներկայացված ՇՄԱԳ-ում ներկայացված տեղեկատվության՝ գործունեության տարածքում առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ Բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակները բացակայում են: Հանքավայրի տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող, բնության հուշարձանների և պատմամշակութային հուշարձանների տարածքներում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կապուտան բնակավայրում անցկացվել են հանրային քննարկումներ, որի վերաբերյալ ծանուցվել են ազդակիր բնակավայրերը /Բյուրեղավան համայնքի Ջրաձոր բնակավայր և Ակունք համայնքի Կապուտան բնակավայր/: Քննարկման ընթացքում մասնակիցների կողմից գործունեության իրականացումն արժանացել է հավանության, բարձրացված հարցերին տրվել են պատասխաններ, կարևորվել է արդյունահանման աշխատանքների ընթացքում ազդակիր բնակավայրից աշխատատեղերի ստեղծումն ու Ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը: Ընկերության Ընկերության ներկայացուցչի կողմից հավաստվեց, որ ընդերքօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման դեպքում Ընկերությունը կիրականացնի ստանձնած պարտավորությունները: Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ արդեն իսկ Ընկերության կողմից իրականացվել է պաշտպանիչ շերտով ծառատունկ բնակավայրի ուղղությամբ: Բյուրեղավան համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել է դրական կարծիք՝ պայմանով որ հումք տեղափոխող մեքենաները բեռնվեն սահմանված չափով:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և ներքին գործերի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից

ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Վերլուծելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության և հանրային քննարկումների արդյունքները, պետք է փաստել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների, ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել նախագծային փաստաթղթերում ներկայացված տեխնոլոգիական լուծումների և ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև Կապուտան բնակավայրում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:
2. Հումք տեղափոխող մեքենաներն անհրաժեշտ է բեռնավորել սահմանված չափով՝ հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով:
3. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
4. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
5. Ընկերությունը ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով շրջակա միջավայրի նախարարություն պետք է ներկայացնի հայտ՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար:
6. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում նախատեսված միջոցառումների իրականացումը (կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը) և դրանց իրականացման ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԼԵՅՄԱՆՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների (պեռլիտների) հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան